ԱՆՈՒՇ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ (ԱՌԱՋԱՐԿԻ) ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ (ՊԱՀԱՆՋԱՐԿԻ) ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերության բարեհաջող զարգացումը կախված է ունակ աշխատուժի առկայությունից: Արդյունաբերության տարբեր ոլորտներ հատուկ պահանջներ են ներկայացնում բոլոր նրանց, ովքեր կամենում են մասնագիտանալ ու առաջ գնալ: Այս առումով բարձրագույն կրթությունը դիտվում է որպես տնտեսական, մշակութային ու հասարակական զարգացման կարևոր շարժիչ ուժ: Ակնհայտ է, սակայն, որ բուհական շրջանավարտներն այժմ չունեն այն որակավորումները, որոնք անհրաժեշտ են տնտեսության հարափոփոխ ոլորտներում արդյունավետորեն աշխատելու համար: Ավելին, երիտասարդները հստակ պատկերացում չունեն, թե իրենց մասնագիտություններն այսօր ինչ պահանջներ ու ակնկալիքներ են առաջադրում: Իսկ զարգացող տնտեսությունը տալիս է մի խիստ պահանջ. այն է, որ ուսանողները պետք է աշխատանքային փորձ ունենան: Ըստ էության այս պահանջը ենթադրում է, որ տարբեր ոլորտներ թափանցելու համար ուսանողներին անհրաժեշտ է համապատասխան հմտություններ ձեռք բերել:

Բարձրագույն կրթության որակն ուղղակի ազդեցություն ունի արդյունաբերական զարգացման, իսկ սրանից էլ երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա: Շուկան պահանջում է, որ աշխատուժի հմտությունները տնտեսական զարգացումներին համընթաց բարելավվեն, իսկ գիտակրթական համակարգը լուրջ դժվարություններ ունի արդյունաբերության ու կրթության միջև առաջացած անջրպետը կամրջելու գործում: Անհրաժեշտ և առկա հմտությունների միջև գոյություն ունեցող այս անջրպետը շարունակաբար մեծացել է իր բացասական հետևանքները թողնելով Հայաստանում առանց այդ էլ սուր արտահայտված գործազրկության հիմնախնդրի վրա:

Հաշվի առնելով միջազգային մրցակցությունը՝ բուհերը պետք է առավել լուրջ ուշադրություն դարձնեն աշխատուժի շուկայի հանդեպ դրված պահանջները բավարարելուն և արձագանքեն ունակ կադրեր պատրաստելու կարիքին: Նրանք պետք է արժանավայել կատարեն մրցակցային աշխատաշուկայի ու հասարակական բարդ հարաբերությունների պայմաններում մրցունակ մասնագետներ պատրաստելու իրենց ավանդական դերը:

Հայաստանյան բուհերը կրթության որակի և արդյունաբերության հետ համընթաց զարգանալու խնդիրներ ունեն: Գիտակրթական և արդյունաբերա-

կան բնագավառների միջև եղած անջրպետը մեծանում է հետևյալ գործոնների ազդեցությամբ.

1. **Բարձրագույն կրթության ներկա համակարգն իր թերություններով** հատկապես.

a. Շրջանավարտի գործնական հմտությունների պակասը,

b. Ընդհանուր բնույթի կրթությունը և մասնագիտացման պակասը,

c. Բուհերի և գործատուների միջև անհրաժեշտ կապի թերությունները:

2. **Գիտակրթական ոլորտի աշխատակիցների ծանրաբեռնվածությունը**, որը չափից ավելի ժամանակ ու էներգիա է սպառում թույլ չտալով իրենց անդրադառնալ արդյունաբերության տարբեր ոլորտների մասնագետների գնահատականներին: Ընդհանուր առմամբ դասախոսները զբաղված են դասավանդմամբ, հետազոտական աշխատանքներով, ուսանողների կուրսային ու դիպլոմային աշխատանքների ղեկավարմամբ և այլն: Ի լրումն սրանց, դասախոսները պետք է ուսումնական ծրագրեր մշակեն և ուսուցողական նոր նյութեր ձեռք բերեն: Միաժամանակ, **պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներից ոչ պակաս, վերապատրաստվելու և գիտելիքները** հարստացնելու **կարիք ունի**, հատկապես այնպիսի ոլորտներում, որտեղ փոփոխություններն անընդհատ են:

CAPS-ի հետազոտությունը

ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության կողմից ֆինանսավորվող «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ)/CAPS ծրագիրը 2007-2008թթ. կատարեց Հայաստանի զբոսաշրջության ոլորտի հմտությունների ու գիտելիքների կարիքների գնահատում: Այս հետազոտության շրջանակներում հարցազրույցներ անցկացվեցին զբոսաշրջային ընկերությունների ու զբոսաշրջության ոլորտի ուսումնական ծրագրերի ներկայացուցիչների հետ, հարցումներ արվեցին Հայաստանի զբոսաշրջության ոլորտում գործող 250 ղեկավարների ու աշխատակիցների հետ: Հետազոտության նպատակն էր գնահատել պահանջվող և առկա գիտելիքների (տեսություններ, փաստեր, աշխատուժի վարքագծեր) և հմտությունների (աշխատակցի գործառույթներ, իրավիճակային վարքագիծ ու գործողություններ) միջև եղած տարբերությունը, ինչպես նաև ի հայտ բերել այս տարբերություններն առաջացնող գործոնները: Հետազոտության գլխավոր խնդիրներն էին ճշտել այս տարբերությունների չափերը և պարզել, թե որոնք են դրանց առանձին բաղադրիչները:

Հետազոտության արդյունքները բարձրացնում են մի շարք հիմնախնդիրներ, որոնք օգնում են կողմնորոշվել, թե ինչպես պետք է կամրջել գիտակրթական և հյուրընկալության ոլորտների միջև առաջացած անջրպետը: Մասնակիցներից ստացվել են պատասխաններ, որոնք, յուրաքանչյուր կողմի հիմնախնդիրները բարձրացնելով հանդերձ, լուծման եղանակներ են առաջարկում: Այս առաջարկներն ուղղված են զբոսաշրջային կրթություն տրա-

մադրող հաստատությունների ու զբոսաշրջային ծառայություններ մատուցող ընկերությունների միջև արդյունավետ համագործակցության կայացմանը:

Հայաստանում այժմ գործում են 16 պետական և 83 մասնավոր բուհեր, որոնցից մի քանիսը տրամադրում են զբոսաշրջության մասնագիտացում: Վերջին տարիներին առաջացած այս մասնագիտական կրթությունը հուսադրական է: Սակայն, հետազոտության ընթացում պարզվեց, որ զբոսաշրջային այս կրթական ծրագրերը զբոսաշրջության ոլորտի պահանջներին համապատասխանաբար մասնագիտացած շրջանավարտներ չեն պարտաստում:

Ինչպես ցույց է տալիս այս հետազոտությունը, թեև վերջին տարիներին ի հայտ են եկել զբոսաշրջային կրթություն տրամադրող ծրագրեր, որոշակի խզվածություն է մնում ոչ միայն կրթական ծրագրերի բովանդակության և ոլորտում հաջողությամբ աշխատելու համար անհրաժեշտ հմտությունների միջև, այլև զգացվում է կրթություն-գործարարություն երկխոսության պակասը, ինչը և պիտի կամրջեր այդ խզումը:

Այս թերության ամենատարածված պատճառը «համապատասխան հմտություններով օժտված դիմորդների պակասն» է: Հարցազրույցների արդյունքում հայտնաբերվել են զբոսաշրջային կրթություն տրամադրող ծրագրերի հետ կապված խնդիրներ: Այս առումով հետաքրքիր էր պարզել, թե որոնք են այն հիմնական պատճառները, որոնցով շուկա են մտնում համապատասխան ունակություններ չունեցող շրջանավարտներ: Մի քանի հիմնական բացատրություններ երևան եկան.

- Կրթական ծրագրերը կենտրոնանում են զբոսաշրջության և ոչ թե հյուրընկալության վրա (ինչն ավելի շատ աշխատատեղեր է առաջարկում),
- Կրթական ծրագրերն ուղղված չեն լրացնելու ոլորտի կարիքները,
- Դասախոսները չունեն բավարար մասնագիտական փորձառություն,
- Պրակտիկ աշխատանքներն արդյունավետ չեն կազմակերպված,
- Չկան աշխատանքային փորձ ձեռք բերելու ուրիշ հնարավորություններ,
- Ուսուցիչներն ու գործատուները բավականաչափ չեն հաղորդակցվում,
- Սակավ են գիտակրթական ռեսուրսները գրադարաններ, համակարգիչներ և այլն:

Հմտությունների ու գիտելիքների գնահատման հետազոտության արդյունքներն ի հայտ եկած բացերը լրացնելու ուղղությամբ տալիս են մի շարք առաջարկություններ: Առաջնային առաջարկություններից է այն, որ հարկավոր է մշակել զբոսաշրջության ոլորտի ծյուղերին հատուկ հմտությունների ելակետային բազա: Այս առումով առաջարկվում է ուսումնասիրել մի շարք օտարերկրյա ու միջազգային որակավորման ծրագրեր՝ հստակեցնելու այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են, օրինակ, միջոցառումների կազմակերպման,

հյուրընկալության ծառայություններ մատուցողների վերապատրաստման, հաճախորդների սպասարկման, օտար լեզուների յուրացման, զբոսաշրջային կենտրոնների կառավարման, սննդի հիգիենայի ապահովման, ազգային արժեքների ներկայացման և այլ ենթաճյուղերում:

Գիտելիքների համապատասխանեցման գործում առաջարկում են կատարելագործել ուսումնական ծրագրեր մշակելու գիտելիքները, հատկապես այն, ինչը կօգնի կողմնորոշվել, թե կրթական ծրագրերում ինչ առարկաներ ու մոդուլներ պետք է ներմուծվեն: Գիտելիքների համալրմանը զուգահեռ առաջարկվում է ուշադրություն դարձնել հմտությունների զարգացմանը՝ կարևորելով պրակտիկ աշխատանքներն ու աշխատանքային փորձ ձեռք բերելու ուրիշ հնարավորությունները: Առաջարկները վերաբերում են նաև պրոֆեսորա-դասախոսական կազմի վերապատրաստմանը, ինչպես նաև գիտակրթական ծրագրերի ու գործարար համայնքի միջև հարաբերությունների բարելավմանը, որոնց արդյունքում շրջանավարտներն առավել պատրաստ կլինեն աշխատելու Հայաստանի զբոսաշրջային ոլորտի իրականության մեջ:

Նշված բացը լրացնելու համար, նախ և առաջ, կարևոր է ուսումնական ծրագրերի մեջ ներմուծել անհրաժեշտ հմտությունները, սակայն ինչպե՞ս:

Գոյություն ունեն ուսումնական ծրագրերում անհրաժեշտ հմտություններ ներմուծելու բազմաթիվ օրինակներ: Ընդհանուր առմամբ սա կարող է լինել առանձին ուսուցանվող դասաժամերի միջոցով, կամ ուսումնական ընդհանուր ծրագրերում այդ հմտությունների հետևողական ընդգրկմամբ: Ավելին, հմտությունների զարգացմանը զգալիորեն նպաստում են ոլորտի մասնագետների հետ ուսուցչակազմի շփումները, ոլորտի փորձառու մասնագետների կողմից ուսանողներին տված դասերը, ինչպես նաև գործնական համատեղ աշխատանքները (Treby & Shah, 2005):

Աշխատանք գտնելու համար ուսանողներին անհրաժեշտ որակավորումներով զինելու նպատակով ոչ միայն տվյալ առարկայի ուսումնական ուղղվածությունը պետք է համապատասխան լինի, այլ նաև ուսանողների մոտ պետք է զարգացնել այնպիսի փոխանցվող հմտություններ, որոնցով նա կկարողանա իրավիճակը պատշաճորեն գնահատել, բարդ և անկանխատեսելի իրավիճակներում նախաձեռնություն, ինքնատիպություն ու ստեղծագործ մոտեցում ցուցաբերել, ինքնագնահատմամբ զբաղվել ու անձնական պատասխանատվություն գիտակցել (SEEC, 2003; QAA, 2001): Ի վերջո, գործատուներին հետաքրքրում են ոչ միայն համապատասխան հմտություններով օժտված մարդիկ, այլև այդ հմտությունները փոխանցելու ունակ մասնագետներ (Owen, 2001), այստեղից էլ հետևում է, որ ուսումնական աստիճանները պետք է ուղղված լինեն ուսանողներին աշխատանքային շուկայում պահանջվող հմտություններ ընձեռելուն:

Առաջարկություններ

Բուհական կրթության ու գբոսաշրջության ոլորտի միջև առաջացած անջրպետը հարթելու նպատակով առաջարկվում են հետևյալ քայլերը.

1. Ավելացնել բուհական կրթության ու գբոսաշրջության ոլորտի մասնագետների շփումները համատեղ ծրագրեր իրականացնելով, ուսանողներին աշխատանք գտնելու հնարավորություններ տալով, տվյալ բուհի համբավը բարելավելով, համայնքի կյանքին մասնակցելով և լսարանային կրթությունը գործնական աշխատանքների հետ համատեղելով:

2. Նպաստել այն ամբիոնների աշխատանքներին, որոնք կամենում են ոլորտի ներկայացուցիչների հետ համատեղ ծրագրեր իրականացնել, սակայն չունեն անհրաժեշտ միջոցներն ու գործիքները:

3. Ավելացնել գործնական աշխատանքներին հատկացվող դասաժամերը: Ավելի շատ կարևորել ունակությունները, ոչ թե առանձին առարկաների իմացությունը:

4. Համատեղել տեսականը գործնականի հետ:

5. Ուսանողներին ընտրել ըստ ոլորտի որակավորման պահանջների:

6. Կիրառել «մեկամյա վերապատրաստական ծրագրի» գաղափարը, այսինքն՝ բուհն ավարտելու համար ուսանողից պահանջել, որ նա բարեհաջող ավարտի մեկամյա վերապատրաստական (գործնական) ծրագիր:

7. Գնահատել շրջանավարտի մասնագիտական, կազմակերպչական ու անձնային որակներն ըստ շուկայի պահանջների: Գործատուներն այժմ իրենք են սահմանում, թե ինչ հմտություններով օժտված մարդ են պահանջում և նրանից անձնական ինչ որակներ են ակնկալում: Գիտական աստիճանն այլևս չի համարվում ինքնաբերաբար աշխատատեղ երաշխավորող գործոն:

8. Ընդլայնել պրոֆեսորադասախոսական կազմը և շարունակել նրանց ընթացիկ վերապատրաստումները:

9. Համագործակցել տարբեր հաստատությունների հետ ուսումնական ծրագրեր մշակելու, ընթացիկ վերապատրաստումներ անցկացնելու և ուսումնական նոր ռեսուրսներ պատրաստելու ուղղություններով:

10. Դասավանդողների կազմը համալրել ոլորտի մասնագետներով և լավ վարձատրել:

11. Կիրառել ուսուցողական արդի մեթոդներ, էլեկտրոնային կապի միջոցներ:

12. Ապահովել տեխնիկապես հագեցած լսարաններ գործնական պարապմունքներ կատարելու համար:

«Գիտելիքը պետք է հոսի իմացողներից կատարողներին: Գիտելիքների այս հոսքը կարող է տարբեր եղանակներով կատարվել սկսած դասախոսություններից ու քննարկումներից և 18-րդ դարին հատուկ հանրագիտարաններից մինչև համայնքային քոլեջներն ու 21-րդ դարին հատուկ ինտերնետը: Բայց պետք է այս հոսքերն ապահովող հաստատություններ լինեն»:

- Joel Mokyr, The Gifts of Athena, Historical Origins of the Knowledge Economy, 2002, p. 291

Օգտագործված գրականություն

1. Owen, E. (2001). *What key skills do employers need?* Journal of Geography in Higher Education, 25 (1) 121-126.
2. South East England Consortium for Credit Accumulation & Transfer (SEEC) (2003). *Credit Level Descriptors for Further and Higher Education*. March 2003. Available online: http://www.seec-office.org.uk/resources.htm
3. Quality Assurance Agency for Higher Education (QAA) (2001). *The Framework for Higher Education Qualification in England, Wales and Northern Ireland*. Annex 1. January 2001. Quality Assurance Agency for Higher Education. Available online: http://www.qaa.ac.uk/crntwork/nqf/ewni2001/contents.htm
4. Treby, E. and Shah, A. (2005). *Bridging the Gap Between Academia and Practitioners: Training Coastal Zone Managers*. Planet No. 14, June 2005 16-17.
5. *Tourism Skills and Knowledge Needs Assessment* (December 2007). United States Agency for International Development (USAID), Competitive Armenian Private Sector (CAPS). Available online: http://www.caps.am/publications/CAPS_Skills_and_Knowledge_Assessment_Report.pdf